## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

**«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:**

**Հարուցյալ Փրկչի Իշման սուրբ սեղանեն այսօր երջանիկ ենք Ձեզ բերելու նվիրական ավետիսը սուրբ Հարության հրաշքին, որ աշխարհն ու պատմությունը լեցուց կենարար ու ստեղծարար շնորհներով և մանավանդ սիրո և խաղաղության շնչով:**

**Մեր օրերուն առավել քան անցյալի մեջ, տագնապներով լի մարդկությունը ծարավն ունի Քրիստոսի փրկարար սիրույն և շնորհներուն, հասնելու համար ազգություններու միջև համերաշխ գործակցության և իրավ խաղաղության նավահանգիստը:**

**Այսօր, սուրբ Զատկի լուսաբացին, թող համայն աշխարհին ու նաև մեր Մայր եկեղեցիին և մեր հարազատ ժողովուրդին առատապես բաշխվին ամենահաղթ շնորհները սուրբ Հարության Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի:**

**Սուրբ Հարության շնորհներով, նաև առավել լույս և առավել հոգեշեն եռանդ Ձեզ և համայն Մեր հավատացյալ զավակներուն:**

**Եղբայրական սիրով ի Քրիստոս՝**

**ՎԱԶԳԵՆ Ա**
**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի արտագին շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորանքների համար: